

U $\frac{2}{581}$

13.00.02

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱՐԻՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԵՒՂ ՀՍԻՆՈՒ ՄՈՒՍՏԱՅԱ

ԿՐՏԱԵՐ ՂՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՆ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒԱ» ԱՌԱՐԿԱՅԻՑ

ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (Ֆիզիկական
կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Կարգ 145

Երևան – 2013



Ատենախոսական թեման հաստատվել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների թեկնածու Ե.Ս. Հակոբյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր Ա.Վ. Աբրահամյան
	մանկավարժական գիտությունների թեկնածու Ա.Ռ. Խաչատրյան
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Պաշտպանությունը կկայանա 2014 թ հունվարի 30-ին, ժամը 14⁰⁰-ին, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհող 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2013թ. դեկտեմբերի 28-ին

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Ա.Վ. ԱԿՍԵՅԱՆ



11-581

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՂԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արդիականություն: Հին աշխարհի մտավորականները ֆիզիկական կուլտուրան դիտարկում էին որպես կրթության անբաժանելի մաս՝ անձի համակողմանի, ներդաշնակ զարգացման միջոց: Մարդու զարգացման տարիքային բոլոր շրջաններում ֆիզիկական կուլտուրան ներգործում է ոչ միայն նրա մարմնի, այլև գիտակցության, ներաշխարհի, վարքագծի և սոցալականացման վրա:

Դեռևս իր ժամանակ Պ.Ֆ. Լեսգաֆտը գտնում էր, որ «ֆիզիկական կրթության» մեթոդները պետք է կառուցվեն մտավոր կրթության ընդհանուր սկզբունքների վրա: Նա նշում էր ֆիզիկական դաստիարակության վիթխարի նշանակությունը երեխաների ընկալման և մտածողության զարգացման գործում: Այդ ուսմունքի կարևորագույն դրույթը համարվում էր շարժողական գործողությունների գիտակցված յուրացումը և դրանց կառավարումը, այսինքն՝ այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ նախադրյալ են՝ գիտակցված յուրացնելու շարժողական կարողությունները, հմտությունները և կյանքում արդյունավետ կիրառելու ձեռք բերված ֆիզկուլտուրային արժեքները, կարևորելու ֆիզիկական դաստիարակության անձնական և հասարակական նշանակությունը՝ ինքնուրույն օգտագործելով ֆիզիկական կուլտուրայի միջոցները:

Ներկա ժամանակաշրջանում ֆիզիկական կուլտուրայի տեսական հարցերն ավելի և ավելի են ամրագրվում դպրոցականների կրթական համա-կարգում: Հայ և օտարերկրյա դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության ծրագրային փաստաթղթերում հստակ ամրագրված է, որ ուսուցիչները ֆիզիկա-կան կուլտուրայի դասերին աշակերտներին պետք է հաղորդեն տեսական գիտելիքներ (Ռ.Տ. Սելիքսեթյան, 1991, 2003, Յու.Գ. Գրիգորյան, Հ.Ս. Մինասյան, 2007, В.И. Лях, А.А. Зданович, 2003, А.П. Матвеев, 2008, Г.И. Погадаев, 2010, Ch. Richter, 2007), այսինքն՝ «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման մեթոդիկան վերագինել այնպիսի մոտեցումներով, որոնց միջոցով արդի դպրոցն ունակ կլինի ավելի արդյունավետ կազմակերպելու դպրոցականների ֆիզկուլտուրային կրթությունը:

Դեռ ավելին, անցյալ դարի 90-ական թվականներից մի շարք երկրներում սկսվեց «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասագրքերի ինտենսիվ հրատարակումը և վերահրատարակումը, որը ամբողջովին հիմնված է գիտելիքների ձեռքբերման վրա: Մյուս կողմից, ֆիզիկական կուլտուրայի դասերին տեսական գիտելիքների հաղորդման մեթոդիկան դեռևս լիարժեք մշակված չէ, հանրակրթական դպրոցի երեխաները բավարար չեն յուրացնում այդ գիտելիքները, իսկ ուսուցիչները անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում դրանց հաղորդման վրա (В.К.Бальсевич, 1991, П.В. Бездорозкин, 2000, А.Г.Чашевая, 2003, В. Ю.Зимбетов, 2009, Н.И. Назаркина, 2012): Պատճառներից մեկն այն է, որ ֆիզիկական կուլտուրայի գիտության ասպարեզում այդ հիմնախնդիրը թույլ է մշակված: Հետևաբար, կրտսեր դպրոցականների գիտելիքների ձևավորումը

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից արդիական հիմնահարց է և ունի կարևոր գիտագործնական նշանակություն:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել կրտսեր դպրոցականների ընդհանուր տեսական և մասնագիտական գիտելիքների մակարդակը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից և մշակել դրանց ձևավորման մեթոդիկան:

Հետազոտության օբյեկտն է՝ կրտսեր դպրոցականների գիտելիքները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից:

Հետազոտության առարկան է՝ կրտսեր դպրոցականների գիտելիքների հաղորդման մեթոդիկան:

Հետազոտության վարկածը՝ ենթադրվում էր, որ կրտսեր դպրոցականների գիտելիքների հաղորդման արդյունավետ իրականացումը պայմանավորված է ֆիզիկական կուլտուրայի դասի ընթացքում խոսքի, զննական և գործնական մեթոդների ակտիվ կիրառմամբ, դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեությամբ, որոնք առավելապես կնպաստեն սովորողների գիտելիքների հարստացմանն ու մակարդակի բարձրացմանը, ֆիզիկական վարժությունների նշանակության գիտակցմանն ու ինքնուրույն կատարմանը, ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը:

Հետազոտության խնդիրները: Ելնելով աշխատանքի նպատակի իրականացման պահանջից, առաջադրված հիմնախնդրի արդիականությունից և վարկածից՝ նախատեսել ենք հետևյալ խնդիրների լուծումը.

1. Բացահայտել կրտսեր դպրոցականների ընդհանուր տեսական ու մասնագիտական գիտելիքների մակարդակը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից և դրանց հաղորդման ժամանակակից մոտեցումները:

2. Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության ու Սիրիայի Արաբական Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և ծնողների դիրքորոշումը՝ դպրոցականներին «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գիտելիքների հաղորդման պայմանների և նպատակահարմարության վերաբերյալ:

3. Մշակել և գործնականում փորձարկել դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում ընդհանուր տեսական, մասնագիտական գիտելիքների հաղորդման և կարողությունների ձևավորման մեթոդիկան:

4. Որոշել գիտելիքների ձևավորման արդյունավետությունը կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության կրթական, դաստիարակ-չական և առողջարարական խնդիրների իրականացման գործընթացում:

Հետազոտման մեթոդները: Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝ գրական աղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում, անկետավորում, բովանդակային վերլուծություն (content analysis), մարդաչափություն, մանկավարժական թեստավորում, մանկավարժական գիտավորժ, մաթեմատիկական վիճակագրություն:

Մեթոդաբանական հիմքն են հոգեբանամանկավարժական այն դրույթները, որտեղ հիմնավորված է կրտսեր դպրոցականների գիտելիքների տիրապետման անհրաժեշտությունը (В.С. Выготский, 2000, Н.Ф. Талызина, 1975, 1986, А.И.

Леонтьев, 1977, Н.Н. Подьяков, 1980, Г.И.Щукина, 1971, М.Н. Скаткин, В.В. Краевский, 1978, Ա.Ա. Սազմանյան, 1975, Յու. Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան, 2005, Գ.Ե. Դուլունյան, 2005), տարիքային հոգեբանության օրինաչափությունները (Ա.Վ. Պետրովսկի, 1971, Դ. Էլկոնին, 1975, Վ.Ա. Կրուտեցկի, 1976, В.С. Мухина, 1998, Л.Б. Обухова, 1997), ֆիզիկական դաստիարակության ժամանակակից պահանջները (Л.П. Матвеев, 2008, А.П. Матвеев, 2003, Ф.Г. Казарян, 2009, В.П. Лукьяненко, 2009, Г.И. Погадаев, 2010), ֆիզիկական վարժությունների ուսուցման տեսական դրույթները և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գիտելիքների հաղորդման գիտական հիմնավորումը (П.Ф. Лесгафт, 1952, В.В. Беллинович, 1958, М.М. Бюген, 1985, Ա.Դ. Եղիազարյան, 1990, Ռ.Տ. Մելիքսեյան, 1991, Հ.Խ. Մինասյան, Հ.Հ. Գաբրիելյան, 2011):

Հետազոտության նորույթը: Առաջին անգամ՝

- բացահայտվել է կրտսեր դպրոցականների գիտելիքների մակարդակը «Ֆիզիկական կուլտուրայի» առարկայից և դրանց ձևավորման առանձնահատկությունները Հայաստանի ու Սիրիայի Արաբական Հանրապետություններում,
- տեսականորեն և գիտականորեն հիմնավորվել է ֆիզիկական դաստիարակության գործընթացում կրտսեր դպրոցականների գիտելիքների ձևավորման մեթոդիկան,
- ապացուցվել է, որ գիտելիքների և կարողությունների ձևավորումը նպաստում է կրտսեր դպրոցականների շարժողական պատրաստվածության բարելավմանը,
- մշակվել և գործնականում ներդրվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից աշխատանքային տետր՝ ցույց տալով դրա արդյունավետությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ ստացվել են նոր տվյալներ, որոնք ցույց են տալիս կրտսեր դպրոցականների գիտելիքների մակարդակը «Ֆիզիկական կուլտուրա» չափորոշիչ ծրագրի բոլոր բաժիններից, մշակվել են գիտելիքների հաղորդման խոսքի և զննական մեթոդների կիրառման մանկավարժական պայմանները:

Գործնական նշանակությունը: Հետազոտման արդյունքների հիման վրա մշակվել է կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում ընդհանուր տեսական և հատուկ մասնագիտական գիտելիքների հաղորդման մեթոդիկա, որը թույլ է տալիս.

- բարձրացնել կրտսեր դպրոցականների ընդհանուր տեսական և հատուկ մասնագիտական գիտելիքների մակարդակը,
- ավելի արդյունավետ լուծել կրտսեր դպրոցականների կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրները,
- ստանալ դրական արդյունքներ՝ սովորողների առողջ ապրելակերպի վարման, ռեժիմի և շարժողական ռեժիմի պահպանման, ճիշտ կեցվածքի ձևավորման և ֆիզիկական կուլտուրայի ձևերի և միջոցների կանոնավոր օգտագործման վերաբերյալ.

- արձանագրել դրական տեղաշարժեր կրտսեր դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության վերաբերյալ.
- հետազոտման արդյունքները կարող են օգտագործվել կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգում, այլ տիպի կրթական հաստատություններում, հանգստավայրերում, ճամբարներում, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում և «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա» առարկայի դասավանդման գործընթացում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը ապահովվել է՝ հիմնախնդրի տեսական ասպեկտների մանրամասն ուսումնասիրմամբ և վերլուծությամբ, հիմնավորված մեթոդներով, որոնք բավարարում են հուսալիության, օբյեկտիվության և հավաստիության պահանջները, համապատասխան սպորտային վիճակագրության մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև անհրաժեշտ թվով հետազոտվողների ներգրավմամբ:

Հետազոտության կազմակերպումը և փուլերը:

Հետազոտումը կազմակերպվել է երեք փուլով՝ 2009-2012թթ.-ին: Աշխատանքի սկզբնական փուլում ուսումնասիրվել և վերլուծվել է գիտամեթոդական գրականություն, տարբեր երկրների հանրակրթական դպրոցների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսումնական ծրագրերը, կազմակերպվել է սոցիոլոգիական հարցում՝ Հայաստանի ու Սիրիայի Արաբական Հանրապետությունների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և կրտսեր դպրոցականների ծնողների շրջանում: Հարցմանը մասնակցել են Երևան քաղաքի 105 ուսուցիչներ ու 375 ծնողներ, Սիրիայի Արաբական Հանրապետության՝ Լատակիա և Հալեպ քաղաքների 205 ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ և 405 ծնողներ:

Կրտսեր դպրոցականների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով հարցում է կատարվել Երևան քաղաքի թիվ 181, 178, 125, 27 դպրոցների 575 սովորողների շրջանում:

Երկրորդ փուլում՝ 2010-2012թթ., կազմակերպվել է մանկավարժական գիտախորձ: Ուսումնական գործընթացում ներդրվել է մեր կողմից մշակված գիտելիքների հաղորդման մեթոդիկական «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից:

Երրորդ փուլում մշակվել, վերլուծվել և ամփոփվել են ստացված արդյունքները:

Աշխատանքի փորձաքննությունը: Տվյալ հետազոտության արդյունքները ներդրվել են դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգում, ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում՝ ֆիզիկական դաստիարակության տեսության դասավանդման գործընթացում:

Հետազոտության հիմնական արդյունքները զեկուցվել են 2012թ. հանրապետական գիտամեթոդական կոնֆերանսում, ներկայացվել են Տաջիկստանում անցկացված միջազգային գիտաժողովում:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները՝

1. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գիտելիքների ձևավորումը՝ որպես կրտսեր դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության ապահովման գործոն:

2.«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման ընթացքում գիտելիքների ձևավորման մեթոդիկական:

3. Կրտսեր դպրոցականների գիտելիքների և կարողությունների ձևավորումը՝ որպես նրանց շարժողական պատրաստ-վածության բարելավման պայման:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը շարադրված է համակարգչային 145 էջում: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, մեթոդական առաջարկություններից, ընդգրկում է 37 աղյուսակ, 12 գծապատկեր, հավելվածներ: Գրականության ցանկում բերված են մատենագիտական 211 սկզբնաղբյուրներ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտման թեմայի արդիականությունը, ընդգծված է աշխատանքի նպատակը, սահմանված է հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության խնդիրներն ու մեթոդները, բացահայտված է գիտական նորույթը, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլուխը՝ «Կրտսեր դպրոցականների գիտելիքների ձևավորման հիմնահարցերը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից», բաղկացած է երեք ենթաբաժիններից, որտեղ ներկայացված են կրտսեր դպրոցականների ֆիզկուլտուրային կրթությանը ներկայացվող ժամանակակից պահանջները:

Այստեղ գոյություն ունեցող գիտամեթոդական գրականության բովանդակային վերլուծության և ամփոփման հիման վրա քննարկվում են տեսական և հատուկ մասնագիտական գիտելիքների հաղորդման անհրաժեշտության հարցերը (Լ.Կ. Ջավալով, 1981, Ջ.Ի.Կուզնեցովա, 1981, Գ.Բ. Մեյկսոն, Յու.Ա. Կուպիլով, 1986, Ա.Պ. Մատվեն, 2002, Ռ.Տ. Մելիքսեթյանը, 1991, Վ.Ֆ.Բալաշովա, 2007, Ե.Վ. Գուլվիլիսին, 2008):

Վերլուծվում են նաև տարբեր հեղինակների դիրքորոշումները գիտելիքների ձևավորման վերաբերյալ, ինչպես նաև դրանց իրականացման մանկավարժական մոտեցումները: Վերոնշյալի հետ կապված հեղինակները եզրակացնում են, որ ֆիզիկական դաստիարակության տեսության մեջ հանրակրթական դպրոցի երեխաների տեսական գիտելիքների հարցերը համեմատաբար թույլ մշակված օղակն են, չնայած դրա անհրաժեշտության մասին մատնանշում են բազմաթիվ հեղինակներ (Գ.Բ.Մեյկսոն, Վ.Ն. Շալյուկ, 1986; Ի.Ի. Սեդուկով, 1987; Ս.Մ. Յաբլոն, 1985; Վ.Ս. Բոգոսլովսկի, Յու.Վ. Զելեզնյակ, 1998):

Հասունացել է այն ժամանակը, երբ անհրաժեշտ է իրականացնել աշակերտների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների համակարգված

ձևավորում, ինչպես ֆիզիկական կուլտուրա առարկայի դասավանդման ժամանակ, այնպես էլ օգտագործել ֆիզիկական դաստիարակության մյուս ձևերի հնարավորությունները: Այս տեսակետին ամբողջությամբ համամիտ է նաև Վ.Պ. Լուկյանենկոն (2009): Նա գտնում է, որ ֆիզիկական կուլտուրայի դասը՝ որպես ֆիզիկական դաստիարակության գործառույթների իրականացման հիմնական ձև, պետք է առաջնահերթ լուծի կրթական խնդիրներ, իհարկե, փոխշարժառարկան և դաստիարակչական խնդիրների հետ:

Յուրաքանչյուր երկրի ֆիզիկական դաստիարակության ծրագիրը բովանդակում է այն հիմնական դրույթները, որոնք ելակետային են և կոչված են ապահովելու սովորողների ֆիզկուլտուրային կրթությունը:

Տարբեր երկրների սովորողների ֆիզիկական դաստիարակության գործընթացի և ֆիզիկական կուլտուրայի ծրագրերի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ ժամանակն է զլխավոր ուշադրությունը կենտրոնացնել տեսական, մեթոդական, կազմակերպչական գիտելիքների հաղորդման մեթոդիկային:

Ուսումնասիրվող հիմնահարցի համակողմանի հետազոտման համար կատարվել է «Физическая культура в школе» ամսագրի բովանդակային վերլուծություն, որը համարվում է ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հիմնական գիտամեթոդական տեղեկատվության աղբյուր: Այն նպատակ է ունեցել բացահայտել՝ զանգվածային հրատարակության քանակական ցուցանիշները, հոդվածների թեմատիկ ուղղությունները: Ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռնել իմանալ մանկավարժական ինչպիսի դրական փորձ է կուտակվել դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգում, մյուս կողմից՝ վեր հանել այն հիմնական հիմնախնդիրները, որոնք մտահոգում են մասնագետներին:

Երկրորդ գլուխ՝ «Կրտսեր դպրոցականների գիտելիքների ձևավորման վիճակն ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների»:

Առաջնորդվելով դպրոցականների գիտելիքների հաղորդման կատարելագործման կենսական պահանջով՝ խնդիր է առաջացել հանգամանորեն ուսումնասիրել այդ գործընթացի իրականացման մեխանիզմները, որի համար հարցաթերթիկային հարցում ենք անցկացրել Հայաստանի և Սիրիայի Արաբական Հանրապետությունների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների շրջանում:

Անշուշտ, ընդհանուր տեսական և հատուկ մասնագիտական գիտելիքների հաղորդման արդյունավետությունը պայմանավորված է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մանկավարժական պրոֆեսիոնալ պատրաստվածությունից, նրա կողմից կիրառվող համարժեք մեթոդներից: Հարցումից պարզվեց, որ խոսքի մեթոդը ավելի հաճախակի է օգտագործվում երկու երկրների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների կողմից, քան գնական մեթոդները: Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության դպրոցների գերակշռող մեծամասնությունում գնական մեթոդները դեռ չեն գտել իրենց անհրաժեշտ կիրառումը: Մինչդեռ գնական մեթոդների օգտագործումն է մեծապես նպաստում ուսուցանվող նյութի արագ յուրացմանը, պատկերավոր հիշողության պահ-

պանմանը և վարժությունների նմանաձև կրկնությանը: Հետևաբար, գիտելիքների հաղորդման համար անհրաժեշտ է պատրաստել պաստառներ, նկարներ, գնական այլ նյութեր:

Հարցումից պարզվեց, որ Հայաստանի Հանրապետության դպրոցներում գիտելիքների հաղորդումը հիմնականում իրականացվում է ֆիզիկական կուլտուրայի դասի ժամանակ, որը կազմում է 98,9%, իսկ Սիրիայի Արաբական Հանրապետությունում 59,7%: Հայաստանի Հանրապետության ուսուցիչների 60,5%-ը տեսական գիտելիքների ձեռքբերման համար հանձնարարում է տնային առաջադրանք, իսկ Սիրիայի դպրոցներում այն կիրառում են ընդամենը ուսուցիչների 5,9 %-ը:

Հարցման ընթացքում պարզաբանվել է, թե երկու երկրների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները ծրագրի բաժինների ուսումնական նյութի դասավանդման ժամանակ որքանով են կարևորում գիտելիքների հաղորդումը, ինչպիսի հաճախականությամբ են այն հաղորդում:

Հարցման արդյունքների վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ երկու երկրների ուսուցիչների մեծամասնությունը բարձր են գնահատում տեսական գիտելիքների դերը ծրագրի բաժինների դասավանդման ժամանակ: Միաժամանակ նրանք գտնում են, որ այն զգալի կօգնի սովորողներին ձեռք բերել անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

Առաջնորդվելով ատենախոսական աշխատանքի նպատակից՝ ստանդարտացված հարցման միջոցով բացահայտվել է 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների սովորողների գիտելիքների մակարդակը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից: Մշակվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի բովանդակության համաձայն կրտսեր դպրոցականների գիտելիքների և կարողությունների որոշման 25 հարցերից բաղկացած թեստ-առաջադրանք, որը ներառում է առարկայի պահանջների 7 ուղղություն՝ յուրաքանչյուրը 3 պատասխանի տարբերակով:

Այդպիսի նոտեցումը հնարավորություն տվեց միաձուլված ստուգել կրտսեր դպրոցականների գիտելիքները և կարողությունները:

Բոլոր ժամանակներում դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում արևելիկական վարժությունների ուսուցմանը տրվել է առաջնահերթություն. դրանք, լինելով հիմնական կիրառական շարժումներ, ավելի են նպաստում սովորողների կրթական, դաստիարակչական, առողջարարական խնդիրների համալիր լուծմանը:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ճիշտ կարողանում են վազել երկրորդ դասարանի տղաների 28,3 %, որոնցից 18,9% չեն կարողացել բացատրել ու նկարագրել վազքը, աղջիկներից ճիշտ կարողացել են վազել 26,7%, որոնցից 17,8% դարձյալ չկարողացան տալ հստակ հիմնավոր բացատրություն:

Հարցումից պարզվեց, որ բավականին մեծ տոկոս է կազմում այն սովորողների քանակը, որոնք դժվարանում են նույնիսկ պարզ, առօրյա խոսակցա-

կանով բացատրել և ցուցադրել վազբով, ցատկով և նետումներով շարժախաղեր: Այսպես՝ երկրորդ դասարանի տղաների 71,5-ից 91,5%-ը, աղջիկների 69,3-ից 79,5%-ը չեն կարողացել կատարել վերը նշված հանձնարարությունը: Տարեցտարի թե տղաների, և թե՛ աղջիկների մոտ նկատվում է շարժախաղերի ճիշտ բացատրման և ցուցադրման աճի միտում: Այնուամենայնիվ, 4-րդ դասարանի տղաների 58,4%-ից 76,4%-ը և աղջիկների 64%-ից 68%-ը դարձյալ չեն կարողանում ճիշտ բացատրել և ցուցադրել նախա-տեսված շարժախաղերը:

Հարցման արդյունքները փաստում են, որ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները ֆիզիկական վարժությունները ուսուցանելիս կամ սովորողներին չեն հաղորդում անհրաժեշտ գիտելիքներ, կամ հաղորդում են շատ մակերեսորեն:

Կրտսեր դպրոցական տարիքը ոչ միայն տարբեր շարժողական կարողությունների և հմտությունների հաջող տիրապետման, այլև շարժողական ընդունակությունների մշակման ամենապատասխավոր շրջանն է (Ֆ.Չ. Ղազարյան, 2007; Ղ.Ս. Մաթևոսյան, 2008): Ուշագրավ է այն փաստը, որ երկրորդ դասարանի տղաների 3,9-ից՝ 6,9%-ը ցույց են տալիս վարժությունը, սակայն հստակ չգիտեն, որ շարժողական ընդունակությունն է զարգացնում: Նույնը նկատելի է նաև 3-րդ և 4-րդ դասարանի սովորողների մոտ: Այսպես՝ չորրորդ դասարանի տղաների 6,7%-ից 15,7%-ը և աղջիկների 7%-ից 12 %-ը դարձյալ կարողանում են ցուցադրել վարժությունը, սակայն չեն կարողանում բացատրել, թե որ շարժողական ընդունակությունն է զարգացնում: Ստացված արդյունքների վրա պետք է առանձնակի ուշադրություն դարձնել, քանզի հստակ ցույց են տալիս աշակերտների և տեսական գիտելիքների ցածր մակարդակը և նրանց գործնական կարողությունների փոխակերպումը: Ուստի, անհրաժեշտ է այնպիսի մեթոդիկայի մշակումը, որը թույլ կտա սովորողներին ունենալ համապատասխան գիտելիքներ շարժողական գործողությունների ճիշտ կատարման և գործնականում դրանք կիրառելու վերաբերյալ:

Երրորդ գլուխ՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գիտելիքների հաղորդման արդյունավետությունը. մանկավարժական գիտափորձ:

Մանկավարժական գիտափորձի պլանավորման համար հիմք է ընդունվել համալիր մոտեցումը՝ ֆիզիկական դաստիարակության դասային և ոչ դասային ձևերի օգտագործումը, ուսուցման և դաստիարակության ավանդական և ժամանակակից միջոցների և մեթոդների կիրառումը:

Մանկավարժական գիտափորձը անցկացվել է Երևանի թիվ 181 դպրոցում 2010-2011 և 2011-2012 ուսումնական տարիների ընթացքում: Գիտափորձում ընդգրկված են եղել փորձարարական խմբում 3-րդ դասարանի 56 սովորողներ՝ 27 տղա և 29 աղջիկ, ստուգողական խմբում՝ 54 դպրոցականներ՝ 26 տղա և 28 աղջիկ:


Պատրաստվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի բոլոր բաժինների՝ գիտելիքների հիմունքների, մարմնամարզական և աթլետիկական վարժությունների, շարժախաղերի, «Զվարճալի ֆուտբոլի» շարժողական ընդունակությունների մշակման պատկերազարդ գննական նյութեր՝ հիմք ընդունելով

նելով մանկավարժությունում նման մոտեցումների փորձը (Ներսիսյան Հ.Լ., 2001, Давид Д., 2007): Անչափ կարևորվել է աշխատանքը դասագրքով, որը նպաստեց հաստատուն դարձնել գիտելիքները, ձեռք բերել նոր կարողություններ և հմտություններ:

Մշակվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի աշխատանքային տետր, որը նպաստեց զարգացնելու նաև աշակերտների ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական գործունեությունը: Ողջ մանկավարժական գիտափորձի ընթացքում կրտսեր դպրոցականների գիտելիքների հարստացման և շարժողական կարողությունների ամրապնդման նպատակով մշտապես տրվել է տնային հանձնարարություններ, որն իր մեջ ներառում է դասի ընթացքում հաղորդած ուսումնական նյութի շարունակական զարգացումը:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գիտելիքների հաղորդման համար համակարգել ենք չափորոշիչ ծրագրով նախատեսված ուսումնական նյութը, որը դասավանդվել է տեսական և գործնական դասերին: Նյութը մատչելի ձևով մատուցելու, ինչպես նաև համապատասխան միջոցներ և մեթոդներ ընտրելու համար ֆիզիկական կուլտուրայից գիտելիքները դասակարգել ենք ըստ ուղղությունների (գծապատկեր 1):

Տեսական և գործնական դասերի անցկացման առանցքային մասը կազմել է նպատակի ճիշտ և հստակ ձևակերպումը, դրանից բխող գիտելիքների հաղորդումը և ուսումնական նյութի ընկալումը սովորողների կողմից (գծապատկեր 2):




Գծապատկեր 1. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գիտելիքների դասակարգումն ըստ ուղղվածության

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի բոլոր բաժինների ուսումնական նյութի դասավանդման ընթացքում գիտելիքների հաղորդումը զուգակցվել է շարժողական գործողությունների կատարման հետ: Նման մոտեցումը թույլ տվեց սովորողներին գիտակցված կատարել ֆիզիկական վարժությունները, զերծ պահելով մեխանիկական կրկնությունից, ինչը հաճախակի կատար-

վում էր նախկինում:


Շարժողական գործողության ուսուցումը կառուցել ենք այնպես, որ սովորողները հստակ պատկերացում ունենան դրա էության, կիրառական նշանակության, կատարման տեխնիկայի հիմքի, ինչպես նաև առաջացող հնարավոր սխալների և հսկման վերաբերյալ (գծապատկեր 3):

Ֆիզիկական վարժությունների ուսուցման նման մոտեցումը և շեշտադրումը նպաստեց դրանց գիտակցված ընկալմանը, յուրացմանը և տեխնիկապես ճիշտ կատարմանը:



Գծապատկեր 2. Գիտելիքների ձևավորման տեխնոլոգիան ֆիզիկական կուլտուրայի դասերին

Ի՞նչ պետք է իմանալ



Գծապատկեր 3. Մասնագիտական գիտելիքների կառուցվածքը

Երկամյա գիտափորձի ընթացքում կրտսեր դպրոցականներին կանոնավոր գիտելիքներ են հաղորդվել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի բոլոր բաժինների՝ գիտելիքների հիմունքների, առողջ ապրելակերպի տարրերի, մարմնամարզական և աթլետիկական վարժությունների, շարժախաղերի, լողի և դահուկային պատրաստության վերաբերյալ:

Մանկավարժական գիտափորձի արդյունքները վկայում են, որ, մինչ այն սկսելը, սովորողներն ունեցել են գիտելիքների ցածր մակարդակ կեցվածքի վերաբերյալ: Այսպես՝ ճիշտ կեցվածքը կանգնած դիրքում կարողացել են ճիշտ բացատրել և ցուցադրել տղաների 11 և աղջիկների 17%-ը, նստած վիճակում՝ տղաների 13 և աղջիկների 15%-ը, բայլելիս՝ տղաների 15 և աղջիկների 18%-ը, պայուսակ կրելիս՝ տղաների 18 և աղջիկների 20%-ը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1
Սովորողների գիտելիքների և կարողությունների փոփոխությունը ճիշտ կեցվածքի ծնավորման վերաբերյալ (%)

Մարմնի դիրքը և վարժությունների կատարումը	Խմբեր, սեռը		Հիմնավորված ճիշտ բացատրում և ցուցադրում		Զիջմանավորված ճիշտ ցուցադրում		Միայն բացատրում և ցուցադրում	
			գիտափորձ առաջ	գիտափորձ հետո	գիտափորձ առաջ	գիտափորձ հետո	գիտափորձ առաջ	գիտափորձից հետո
			փորձ.	տղ.	փորձ.	տղ.	փորձ.	տղ.
Կանգնել	փորձ.	տղ.	11	29	16	54	73	17
		աղջ.	17	31	19	50	64	19
	ստուգ.	տղ.	11	15	19	27	70	58
		աղջ.	14	21	21	29	64	50
Նստել	փորձ.	տղ.	13	30	21	52	66	18
		աղջ.	15	34	24	52	61	14
	ստուգ.	տղ.	15	19	23	30	61	50
		աղջ.	18	21	25	32	53	46
Քայլել	փորձ.	տղ.	15	28	17	50	68	22
		աղջ.	18	33	25	47	57	20
	ստուգ.	տղ.	15	23	19	30	65	46
		աղջ.	18	25	21	32	61	50
Կրել այրուսակ	փորձ.	տղ.	18	35	23	54	59	11
		աղջ.	20	39	26	52	54	9
	ստուգ.	տղ.	19	23	23	27	58	50
		աղջ.	21	25	25	32	54	43
Կատարել կեցվածքի վարժություններ	փորձ.	տղ.	5	28	12	47	83	25
		աղջ.	9	29	13	48	78	23
	ստուգ.	տղ.	8	11	15	19	77	69
		աղջ.	11	14	18	21	71	64

Հարկ է նշել, որ մանկավարժական գիտափորձից հետո զգալի նվազել է կեցվածքը սխալ բացատրող և ցուցադրող աշակերտների քանակը:

Մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղի են ունեցել դրական տեղաշարժեր սովորողների գիտելիքների տիրապետման, շարժողական գործողությունների ճիշտ պատկերացման և կատարման գործընթացում:

Այսպես՝ եթե մինչև գիտափորձը առավելագույն մարմնամարզական վարժությունների համալիրներ կարողացել են ճիշտ ընտրել, բացատրել և ցուցադրել փորձարարական խմբի տղաների ընդամենը 6%-ը և աղջիկների 7%-ը, ապա գիտափորձից հետո՝ տղաների 30 և աղջիկների 29%-ը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2
Սովորողների գիտելիքների և կարողությունների փոփոխությունները մարմնամարզական վարժություններից (%)

Մարմնամարզական վարժություններ	Խմբեր, սեռը		Հիմնավորված ճիշտ բացատրում և ցուցադրում		Զիջմանավորված ճիշտ ցուցադրում		Միայն բացատրում և ցուցադրում	
			գիտափորձ առաջ	գիտափորձ հետո	գիտափորձ առաջ	գիտափորձ հետո	գիտափորձ առաջ	գիտափորձ հետո
			փորձ.	տղ.	փորձ.	տղ.	փորձ.	տղ.
Դարձումներ	փորձ.	տղ.	26	40	34	49	40	11
		աղջ.	27	39	31	47	42	14
	ստուգ.	տղ.	27	31	35	38	42	31
		աղջ.	28	32	35	39	29	24
Տեղաշարժ անկունագծով	փորձ.	տղ.	7	29	12	50	81	21
		աղջ.	9	33	17	47	74	20
	ստուգ.	տղ.	12	15	15	19	73	65
		աղջ.	14	18	18	21	68	61
Գլխի խլկանքի առաջ	փորձ.	տղ.	19	39	27	47	54	14
		աղջ.	16	37	25	48	59	15
	ստուգ.	տղ.	19	23	27	34	54	42
		աղջ.	18	25	29	35	54	39
Առավելագույն մարմնամարզություն	փորձ.	տղ.	6	30	10	48	84	21
		աղջ.	7	29	11	51	82	20
	ստուգ.	տղ.	8	12	12	15	81	73
		աղջ.	11	14	11	18	79	69
Ֆիզկուլտ դադար	փորձ.	տղ.	8	33	12	49	80	18
		աղջ.	9	30	15	55	78	15
	ստուգ.	տղ.	8	12	12	19	81	69
		աղջ.	11	14	14	21	75	64
Ընդհանուր զարգացնող վարժություններ	փորձ.	տղ.	4	31	12	50	84	19
		աղջ.	5	30	14	53	81	17
	ստուգ.	տղ.	12	12	12	15	81	73
		աղջ.	11	11	14	18	79	71

Ուշագրավ է այն փաստը, որ եթե մինչև գիտափորձը փորձարարական խմբի տղաների 84, աղջիկների 82%-ը չեն կարողացել բացատրել և ցուցադրել առավելագույն մարմնամարզության համալիրներ, իսկ գիտափորձից հետո՝ տղաների ընդամենը 21 և աղջիկների 20%-ը: Ստահող է այն փաստը, որ սովորողների գիտելիքների և կարողությունների դրսևորման նման՝ որակական փոփոխություններ չենք արձանագրել ստուգողական խմբերում:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ փորձարարական խմբում նույնպես առավել դրական տեղաշարժեր են գրանցվել աթլետիկական երեք վարժություններից՝ նետումից, տեղից հեռացատկից և կարճ տարածության վազքից:


Մեր կողմից առաջադրված մեթոդիկան հնարավորություն ընձեռեց գիտափորձի արդյունքում նույն դպրոցականների մոտ հասնել յուրացված գիտելիքների և կարողությունների բարձր մակարդակի դրսևորման՝ մարմնակազմական և աթլետիկական վարժություններից: Մանկավարժական գիտափորձի արդյունքները վկայում են փորձարարական ծրագրի ներդրման արդյունավետության մասին, որը թույլ տվեց շարժողական գործողությունների ուսուցման հետ համատեղ կատարելագործել ինտելեկտուալ կարողությունները և ընդունակությունները՝ դիտելու, վերլուծելու, ընդհանրացնելու, համեմատելու, գնահատելու շարժումները և դրանց կատարման պայմանները:

Մանկավարժական գիտափորձի արդյունքները թույլ են տալիս փաստել, որ փորձարարական պայմաններում դպրոցականների գիտելիքների և կարողությունների միասնական, փոխապայմանավորված զարգացումը հնարավորություն է տալիս բարձրացնել նաև նրանց շարժողական պատրաստության ցուցանիշները:


Այսպես՝ երկտարյա մանկավարժական գիտափորձի արդյունքում դրական փոփոխություններ ենք գրանցել փորձարարական և ստուգողական խմբերում զլխի վերևից լցրած գնդակի նետման ցուցանիշներում: Սակայն, եթե ստուգողական խմբերում աղջիկների ցուցանիշներն աճել են 65,7 սմ-ով (31,4%), փորձարարական խմբում՝ 116,1 սմ-ով (54,7%) (գծապատկեր 4):

Նման փոփոխություններ ենք արձանագրել նաև ֆիզիկական պատրաստվածությունը բնութագրող հետևյալ թեստային վարժություններում՝ տեղից հեռացատկ, թեքում առաջ, վազք 30 մ և 6 ռոպեանոց վազք:

տղաներ



աղջիկներ



Գծապատկեր 4. Ստուգողական և փորձարարական խմբերում լցրած գնդակի զլխի վերևից նետման ցուցանիշների շարժը (սմ)

Այսպիսով՝ գիտելիքների ձևավորումը համարվում է կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության կարևորագույն խնդիրներից մեկը: Մանկավարժորեն ուղղված ազդեցությունների արդյունքում հաջողվեց ցույց տալ, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գիտելիքների ձևավորումը արդյունավետ է իրականացվում հետևյալ պայմանների առկայության դեպքում՝ զննական նյութերի կիրառում, համակարգված ծրագրային նյութի մատուցում, տեսողական վարում, տնային հանձնարարությունների կատարում: Միանգամայն հասկանալի է, որ նման մոտեցումը զարգացնում է երեխաների մտածողությունը և ունի նաև կարևոր դաստիարակչական նշանակություն: Սովորողների մոտ ձևավորվում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ նպատակասլացությունը, աշխատասիրություն, պարտաճանաչությունը, կազմակերպվածությունը, կարգապահությունը, պատասխանատվությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործական մոտեցումը, կամային որակները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրական աղբյուրների ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց տվեցին, որ ներկայումս աշխարհի շատ երկրներում (Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Գերմանիա, Անգլիա, ԱՄՆ, Ֆինլանդիա, Իռլանդիա, Սիրիայի Արաբական Հանրապետություն և այլն) ավելի է ընդլայնվում և ամրագրվում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի գիտելիքների դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգում: Հետևաբար, հարկավոր է հիմնական ուշադրությունը կենտրոնացնել տեսական, մեթոդական, կազմակերպչական գիտելիքների արդյունավետ հաղորդման մեթոդիկայի մշակմանը՝ վերազինելով այնպիսի մոտեցումներով, որոնց շնորհիվ արդի դպրոցը պատրաստ կլինի ավելի արդյունավետ կազմակերպելու դպրոցականների ֆիզիկուլտուրային կրթությունը, լուծելու նրանց կրթական, դաստիարակչական, առողջարարական և սոցիալականացման խնդիրները:
2. Հետազոտության արդյունքում ի հայտ են բերվել այն հիմնական պատճառները, որոնք խոչընդոտում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին արդյունավետ հաղորդել գիտելիքները: Հայաստանի Հանրապետության (90,1%) և Սիրիայի Արաբական Հանրապետության (77,2%) ուսուցիչների մեծամասնությունը փաստել են, որ թույլ է մշակված տեսական գիտելիքների հաղորդման մեթոդիկան: Սիրիայի Արաբական Հանրապետության ուսուցիչների 94,1%-ը՝ որպես հիմնական պատճառ մատնանշել են, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրում բացակայում է «Գիտելիքների հիմունքներ» բաժինը, 96,9%-ը՝ առարկայի դասագրքերը: Ռուսիացիների 77,2%-ի կարծիքով թույլ է մշակված «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի տեսական դասի անցկացման մեթոդիկան,

ըստ 66,5%-ի՝ աշակերտների առաջադիմության գնահատումը տեսական գիտելիքներից:

3. Բացահայտվել է, որ կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում գիտելիքների հաղորդումը արդյունավետ չի իրականացվում, որի վառ ապացույցն է՝ գիտելիքների հիմունքներից, առողջ ապրելակերպից, շարժողական ընդունակությունների մշակումից, շարժախաղերից, աթլետիկական և մարմնամարզական վարժություններից բացատրման և ցուցադրման կարողությունների ցածր մակարդակը:
4. Մշակվել և գիտափորձով հիմնավորվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից տեսական ու գործնական դասերի գիտելիքների հաղորդման մեթոդիկան: Կիրառվել են այնպիսի մեթոդական հնարքներ ու դիզակտիկ նյութեր, որոնք շաղկապում են խոսքի, զննական ու գործնական մեթոդները՝ նպաստելով գիտելիքների ավելի արդյունավետ յուրացմանը, ֆիզիկական վարժության ճիշտ ընկալմանն ու կատարմանը:
5. Գիտափորձով ապացուցվել է առաջադրված մեթոդիկայի կենսունակությունը, որը հնարավորություն ընձեռեց դպրոցականների մոտ հասնել մարմնամարզական և աթլետիկական վարժություններից յուրացված գիտելիքների և կարողությունների բարձր մակարդակի դրսևորման: Մասնավորապես, մանկավարժական գիտափորձից հետո զգալի նվազել է նաև կեցվածքը սխալ բացատրող և ցուցադրող աշակերտների քանակը, այսպես՝ կեցվածքը, կանգնած դիրքում բնութագրելիս, սխալ բացատրող և ցուցադրող տղաների քանակը նվազել է 66%-ով, աղջիկներինը՝ 45%-ով, նստած դիրքում՝ տղաներինը՝ 48%-ով, աղջիկներինը՝ 47%, քայլելիս՝ համապատասխանաբար՝ 46 ու 37%-ով, պայուսակ կրելիս՝ 48 և 45%-ով:
6. Գիտելիքների ձևավորումն ու զուգորդումը գործնական պարապմունքների ընթացքում դրական ներգործություն ունեցան կրտսեր դպրոցականների շարժողական պատրաստվածության վրա: Երկամյա մանկավարժական գիտափորձի արդյունքում փորձարարական խմբի երկու սեռի դպրոցականների մոտ բարելավվել է ֆիզիկական պատրաստվածությունը: Այսպես՝ տղաների գլխի վերևից լցրած գնդակի նետման ցուցանիշներն աճել են 41,7%, իսկ ստուգողականում՝ 23,5%, աղջիկների մոտ համապատասխանաբար՝ 54,7 ու 31,4%-ով:
7. Մշակվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի աշխատանքային տետր և գիտափորձով ապացուցվել է, որ դրա գործածումը ընդլայնում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողությունը, բարձրացնում է հետաքրքրությունը առարկայի հանդեպ՝ նպաստելով կայուն գիտելիքների և կարողությունների ձևավորմանը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտության արդյունքները հիմք են տալիս կատարել հետևյալ մեթոդական առաջարկությունները.

1. Հանրակրթական դպրոցում անհրաժեշտ է ստեղծել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի լսարան և ձևավորել տեսական նյութերով պատահաներով, նկարներով, թեմատիկ ուղղությամբ տեսանյութերով, ուսուցողական ֆիլմերով, մատչելի գրականությամբ: Լսարանը արդյունավետ օգտագործել ողջ ուսումնական նյութի, ինչպես նաև «Գիտելիքների հիմունքներ» բաժնի դասավանդման, արտադասարանական և ծնողների հետ աշխատանքների կազմակերպման ժամանակ:
2. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից դպրոցականներին ընդհանուր և հատուկ գիտելիքներ հաղորդելու համար անհրաժեշտ է օգտագործել զննական նյութեր պատկերազարդ նկարներ, որտեղ պետք է ներկայացված լինի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի բոլոր բաժինները գիտելիքների հիմունքներ, մարմնամարզական և աթլետիկական վարժություններ, շարժախաղեր, դահուկային պատրաստություն, լող, ինչպես նաև պարունակի նյութեր ֆիզիկական կուլտուրայի և օլիմպիական խաղերի պատմության, առողջ ապրելակերպի, ռեժիմի, կեցվածքի, աչքերի խնամքի, հիգիենայի, շարժողական ընդունակությունների, առավուտյան հիգիենիկ մարմնամարզության, ֆիզկուլտ-դադարի, ֆիզկուլտրոպների համալիրների վերաբերյալ:
3. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից ուսումնական նյութի դասավանդման ընթացքում գիտելիքների հաղորդումը զուգակցել շարժողական գործողությունների կատարման հետ: Շարժողական գործողության ուսուցումը կառուցել այնպես, որ սովորողները հստակ պատկերացում ունենան դրա էության, կիրառական նշանակության, կատարման տեխնիկայի հիմքի, ինչպես նաև առաջացող հնարավոր սխալների և հսկման վերաբերյալ:
4. Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ-ի երկրների օրինակով, ձեռնամուխ լինել Սիբիրայի Արաբական Հանրապետությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասագրքերի, տետրերի, պատահաների հրատարակմանը, ինչպես նաև վերանայել առարկայի ծրագրի բովանդակությունը, առաջնորդվել դպրոցականների ֆիզիկական դաստիարակության ժամանակակից պահանջներով և ավելացնել «Գիտելիքների հիմունքներ» բաժինը:
5. Ակտիվացնել աշխատանքը ծնողների հետ, մշտապես հաղորդել գիտելիքներ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության ժամանակակից պահանջների, ուսումնական և տնային առաջադրանքների կատարման, առողջ կենցաղավարության, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից տետրի վարման մասին, ինչպես նաև հանգստյան օրերին, արձակուրդներին սովորողներին ինքնուրույն ֆիզկուլտուրայով պարապելու կարողության ձևավորման վերաբերյալ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի՝
հրատարակված հետևյալ աշխատանքներում

1. Կրտսեր դպրոցականների տեսական գիտելիքների կարևորության մասին: Հանրապետական 39-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր/ ՀՀ ԿԳՆ.- Եր.: ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, 2012.- 106-110 էջ:
2. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից տեսական գիտելիքների հաղորդումը կրտսեր դպրոցում: Նախաշավիղ.- Երևան, 2012, N8.- էջ 21-26:
3. Роль семьи в формировании знаний по физической культуре младших школьников. Сборник статей 1-ой Межд. Науч-практич. Конф. "Физическая культура и спорт- основа здоровья нации", посвященная 41-ой годовщине со дня основания Таджикского института физической культуры им. С.Рахимова. Душамбе, 2012. - С. 233-236.
4. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դրվածքը արտասահմանյան երկրներում: «Մանկավարժություն».- Գիտամեթոդական ամսագիր.- Երևան, 2013, N7.- էջ 46-53 (համահեղինակ Յու.Գ. Գրիգորյան, Ե.Ս. Հակոբյան):

Зейд Хсина Мустафа

Методика формирования знаний младших школьников по предмету
"Физическая культура"

РЕЗЮМЕ

Актуальность. Вопросы формирования знаний по предмету "физическая культура" становятся все более значимыми в системе школьного образования. В программных документах четко обозначено, что на уроках физической культуры преподаватель должен уделить особое внимание формированию у учащихся знаний. (Р.Т. Меликсетян, 1991, 2003, Ю.Г. Григорян, Г.С. Минасян, 2007, В.И. Лях, 2003, А.П. Матвеев, 2008, Г.И. Погадаев, 2010, Сh. Richter, 2007).

Анализ литературы показал, что на сегодняшний день методика формирования знаний по предмету "Физическая культура" слабо разработана. В результате, учащиеся общеобразовательных школ не усваивают необходимые знания по предмету "Физическая культура", а преподаватели не уделяют должного внимания формированию этих знаний. Все вышесказанное подтверждает актуальность данной работы.

Цель исследования – выявить уровень знаний у младших школьников по предмету "Физическая культура" и разработать методику их формирования.

Новизна. Впервые, на основе теоретических разработок и результатов педагогического эксперимента:

- выявлен уровень знаний младших школьников по физической культуре и определены особенности их формирования в Республике Армения и в Сирийской Арабской Республике,

- теоретически и научно обоснована методика формирования знаний школьников младшего возраста в процессе их физического воспитания,
- доказано, что формирование знаний и умений способствует улучшению двигательной подготовленности школьников младшего возраста,
- разработана и внедрена в практику рабочая тетрадь по дисциплине "Физическая культура", доказана ее эффективность.

Теоретическое значение исследования. Получены новые данные, выявляющие уровень знаний школьников младшего возраста по всем разделам программы предмета "Физическая культура". Разработаны педагогические приемы использования словесного и наглядного методов в процессе передачи знаний.

Практическое значение. На основе результатов исследования разработана методика формирования у младших школьников общих теоретических и специальных знаний по предмету "физическая культура". Данная методика позволяет:

- повысить уровень общих теоретических и специальных знаний школьников младшего возраста.
- более эффективно решать образовательные, воспитательные и оздоровительные задачи физического воспитания.
- получить положительные результаты в ведении школьниками здорового образа жизни, соблюдения общего и двигательного режима, формирования правильной осанки, регулярного применения форм и средств физической культуры.
- зафиксировать положительные сдвиги в физическом развитии и двигательной подготовленности школьников младшего возраста.
- результаты исследования могут быть использованы в системе физического воспитания школьников младшего возраста, а также в учебных заведениях других типов, в местах отдыха, в лагерях, на курсах переподготовки преподавателей физического воспитания и в процессе преподавания дисциплины "Теория и методика физического воспитания".

Достоверность результатов исследования подтверждена детальным изучением и анализом теоретических аспектов проблемы, применением обоснованных методов, удовлетворяющих требованиям информативности, надежности, объективности и достоверности, применением соответствующих методов математической статистики, а также вовлечением необходимого количества исследуемых.

Zeyd Hsino Mustafa

Young pupils' knowledge shaping methods on subject of Physical Culture
SUMMARY

Relevance: Physical theoretical issues are more and more fixed in pupils' educational system. In the physical educational program documents of Armenian and foreign students are clearly stipulated that physical culture teachers during the lessons must give to students a

theoretical knowledge. However, the methodology for physical education classes theoretical knowledge is not fully elaborated yet, and therefore the appropriation of secondary schools children do not have sufficient knowledge of the teachers do not pay attention to the report. This confirms the modernity of the thesis.

The aim of research is to identify the junior pupils' theoretical knowledge on Physical Culture discipline and develop their formation methodology.

Research novelty. For the first time, using modern scientific ideas, developments and ideas

- revealed the junior pupils' knowledge level on physical culture and the formation features in Armenia and Syria.
- theoretically and scientifically justified methodology for physical education in the process of formation of the younger pupils' knowledge
- proved that the formation of knowledge and skills contributes to improve the junior pupils motive preparedness
- processed and practically implemented a workbook on Physical Culture subject showing its effectiveness.

Theoretical significance of the research lies in the fact that new information is received that indicates the level of theoretical knowledge to younger pupils Physical criteria for all sections were developed with knowledge of speech and visual methods of pedagogical conditions.

Practical significance.

Based on the results of research elaborated a junior physical education for pupils with special professional knowledge of the theory and methodology, which allows us to

- increase the younger pupils' general theoretical and special professional scientific knowledge level
- more effectively solve the junior pupils' educational and health problems
- get positive results according to the maintenance of healthy lifestyles, motive mode, the formation of the correct posture, the use of ways and means of regular physical training
- enlist junior pupils' physical development and motive progress
- research results can be used for physical education in junior school system, other types of educational establishment institutions, resorts, camps, physical education teacher training courses and Theory and Methods of Physical Culture subject teaching process.

The accuracy of the survey results provided the theoretical aspects of the problem and a detailed analysis of the study, based on methods that satisfy the informative reliability objectivity requirements of the relevant sports statistics methods, as well as the number of researchers involvement.

(Handwritten signature)



